«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»

Հաստատություն՝ «Երևանի թիվ 13 մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ **Գայանե Մարտիրոսյան**

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ——————————————————————————**3**

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Բաժին 1 Երեխայակենտրոն ուսուցում——————————————————**4**

1.1 Ուսուցման փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդներ——————————**7**

1.2 Ինտեգրված ուսուցում——————————————————————————**9**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԲԱԺԻՆ 2 Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, ընթացքը——**10**

2.1 Ինտերակտիվ պարապմունքի պլան-կոնսպեկտ——————————— **11**

2.2 Ինտեգրված պարապմունքի պլան-կոնսպեկտ——————————————**15**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ——————————————————————————**18**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ——————————————————————**19**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինտեգրված պարապմունքը ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ:

Ինտեգրված պարապմուքնի կառուցվածքը պահանջում է նյութի հստակություն, տրամաբանական կապ տարբեր մեթոդիկաների միջև: Դա իրագործվում է պարապմունքի ընթացքում երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպման ժամանակակից մոտեցումներով, ինտերակտիվ գործունեությամբ: Այն ուղղված է որոշակի թեմայի բովանդակության համակողմանի բացահայտմանը գործունեության տարբեր ձևերով, որոնք հաջորդաբար փոխարինում են մեկը մյուսին: Ինտեգրված պարապմունքները պարտադիր թեմատիկ են, որտեղ ընտրված թեման կամ հիմնական հասկացությունը հիմք է հանդիսանում գործունեության տարբեր ձևերի հանձնարարությունների մեկտեղմանը: Այնուամենայնիվ, այդ պարապմունքներն հիմնվում են միջառարկայական կապերի վրա:

Ժամանակակից դիդակտիկան նախատեսում է ակտիվ ուսուցման մեթոդների կիրառում, որի նպատակն է. <<Սովորեցնել սովորել>>:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ նշել ինտերակտիվ և ինտեգրված պարապմունքների կազմակերպման ձևերը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում:

Հետազոտական աշխատանքի խնդիրն է ծանոթացնել ինտերակտիվ (փոխգործուն) և ինտեգրված պարապմունքներին:

Բաժին 1

ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Մարդը բնության մեջ կատարյալ էակ է: Ուստի, յուրաքանչյուր նոր ծնված երեխա լուսավոր ապագայի խորհրդանիշ է: Յուրաքանչյուր երեխա լիարժեք ապրելու իրավունք ունի, յուրաքանչյուր երեխա ունի զարգանալու և սովորելու երեխայակենտրոն, ներառական և անվտանգ միջավայրում, որտեղ հաշվի կառնվեն յուրաքանչյուր երեխայի մտավոր, հոգեկան, ֆիզիկական և հոգևոր զարգացման առանձնահատկությունները: Յուրաքանչյուր երեխա ունի կարծիք արտահայտելու իրավունք:

Մարդու կյանքում ամեն ինչ սկսվում է մանկությունից: Այն, ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, նրան ուղեկցում է ամբողջ կյանքում: <<Կյանքի սկզբնական շրջանում երեխան զարգանում է, ընկալում աշխարհն ու արձագանքում արտաքին միջավայրին՝ իրեն շրջապատող մեծահասակների միջնորդությամբ>>:[1]

Յուրաքանչյուր երեխա ինքնատիպ է: Եվ երեխային օգնելու համար անհրաժեշտ է ճանաչել նրա ներքին աշխարհը: Բացահայտելով և ճանաչելով երեխայի առանձնահատկությունները, կարելի է նրան ուղեկցել ինքնահաստատման բարդ ճանապարհով: Երեխայի հետ առնչվող ցանկացած մեծահասակ դաստիարակողի դերում է, հեղինակություն նրա համար: <<Այն երեխան, որը մանկության շրջանում իր դաստիարակներին և ուսուցիչներին չի ընկալել իբրև հեղինակությունների, երբևէ չի կարող դառնալ ազատ մարդ>>:[2]

Փաստորեն, դաստիարակությունը չափազանց պատասխանատու գործընթաց է: Եվ հարկ է հիշել Պիկարևի հայտնի խոսքերը. <<Դաստիարակության մեջ ամբողջ խնդիրը նրանում է, թե ով է դաստիարակը>>: Երեխային ուղղորդելու համար անհրաժեշտ է հասկանալ նրան, գիտակցել,որ փոքրիկ մարդուկն ունի կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, կասկածելու, որոշումներ կայացնելու իրավունք: Եվ հմուտ մանկավարժը պետք է սիրի և զգա երեխային ամբողջ սրտով, վստահի և հավատա նրան:

Ժամանակակից նախադպրոցական դիդակտիկան առաջ է ընթանում զարգացնող ուսումնական սկզբունքներով՝ բովանդակության, նոր միջոցների և մեթոդների մշակմամբ, որոնք աստիճանաբար մուտք են գործում

---

[1] Տե՛ս Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան՝ <<Նախադպրոցական մանկավարժություն>>:
[2] Տե՛ս Ռ. Շտայներ՝ <<Ազատության փիլիսոփայություն>>:

նախադպրոցական կրթության համակարգ: Նախադպրոցական տարիքում ձևավորվող ուսումնական գործունեությունը նախապատրաստում է երեխային դպրոցում սիստեմատիկ ուսումնառության:

Ուսուցման գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է երեխաների և մանկավարժների փոխհարաբերություններով, մանկավարժական հազորդակցման ոճով:

Ոճը բխում է հասարակության կողմից ներկայացվող պահանջներից, գերակա խնդիրներից: Ժամանակի ընթացքում ետ մղվեցին մանկավարժական հաղորդակցման ինքնիշխան (ավտորտար) և հարմարվողական (լիբերալ) ոճերը և ժողովրդավարական հասարակությունը պիտի նախընտրեր մանկավարժական հաղորդակցման ժողովրդավարական (դեմոկրատական) ոճը: Այս ոճին համապատասխանում է անհատակողմնորոշիչ մոդելը: Ուսուցման այս մոդելի նպատակն է ուսուցման ընթացքում յուրաքանչյուր երեխայի անհատականության ձեռքբերումը: Մոդելի հիմքում ընկած է Շ. Ա. Ամոնաշվիլու կողմից նկարագրված մարդասիրական, անձնային մոտեցումը երեխային, հավատն ու վստահությունը նրա ներքին ուժերի հանդեպ: Մոտեցման գաղափարն է. <<Երեխան կարող է սովորել, եթե ուզում է>>, հետևաբար անհրաժեշտ է խրախուսել սովորելու ցանկությունը և պատշաճ գնահատելու կարողությունները:[3]

Ուսուցման անհատական մոդելի հիման վրա կառուցվում է մանկավարժական տեխնոլոգիա, որի հիմնական ուղղություններն են.

- Երեխայի ակտիվ մասնակցության ապահովումը ուսուցման փոխգործուն մեթոդների կիրառման միջոցով,
- Երեխաների հետ երկխոսության և համագործակցության հաստատումը,
- Փոխըմբռնման մթնոլորտի ստեղծումը,
- Ուսուցման զարգացնող ուղղվածության ապահովումը երեխաների ինքնուրույն փորձարարական գործունեության կազմակերպմամբ,
- Ուսուցման ընթացքում երեխայի ինքնակառավարման սկզբունքների հաստատումը,
- Ուսուցման իրականացումը համատեղ գործունեության ընթացքում, ուր և՝ երեխան, և՝ դաստիարակը նույն հարթության մեջ են:

Ժամանակակից դիդակտիկան մշակում է ուսուցման նորանոր տեսակներ՝

[3] Տե՛ս <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>:

Ուղղակի ուսուցում, պրոբլեմային ուսուցում, միջնորդված ուսուցում:
Ուղղակի ուսուցման ընթացքում դիդակտիկ խնդիրը երեխաներին առաջադրում է մանկավարժը: Այս դեպքում երեխայի կողմից ձեռք են բերվում <<պատրաստի>> գիտելիքներ:
Պրոբլեմային ուսուցման ընթացքում երեխան ինքն է փնտրում, գտնում, ինքնուրույն ձեռք բերում գիտելիքներ: Այստեղ երեխան հանդես է գալիս ինքնուրույն սովորողի դերում: **Միջնորդված** ուսուցման կարգախոսն է. <<Սովորեցիր ինքդ, սովորեցրո'ւ ընկերոջդ>>: Ուսուցման էությունը զարգացնող միջավայրի կառուցման մեջ է: Զարգացնող միջավայրը նպաստում է երեխաների համագործակցությանը:
Ուսուցման գործընթացը մանկապարտեզում կազմակերպվում է երեք հիմնական ձևերով: Ուսուցման կազմակերպման ամենատարածված ձևը **պարապմունքն** է: Համալիր պարապմունքների ընթացքում լուծվում են դիդակտիկ խնդիրները՝ երեխաներին ներգրավելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Ինտեգրված պարապմունքների ընթացքում երեխային ներկայացվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ՝ տարբեր ոլորտներից: Ուսուցման կազմակերպման արդյունավետ ձև է **էքսկուրսիան,** ինչպես նաև դիդակտիկ խաղը: Այսօր աստիճանաբար մանկապարտեզ են մուտք գործում ուսուցման կազմակերպման նոր ձևեր՝ մտավոր խաղեր, խաղ-բանավեճեր, խաղ-մրցույթներ:

1.1 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽԳՈՐԾՈՒՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՄԵԹՈԴՆԵՐ

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ: Մեթոդը նպատակին հասնելու միջոց և ուղի է: Մեթոդները բաժանվում են երեք խմբի՝

- խոսքային
- դիտողական
- գործնական:

Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել խաղային, գործնական, ակտիվ ուսուցման մեթոդները: Վերջիններս հայտնի են որպես ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են ազատ մտածելու զարգացմանը: Այս մեթոդները խմբային մտավոր աշխատանքի եղանակներ են՝ ուղղված ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Փաստորեն, ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով:

Inter-փոխադարձ **Akt-**գործողություն

Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը, ինչպես նաև մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

- փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- համագործակցությունը,
- հետադարձ կապը,
- ինքնարտահայտման խրախուսումը,
- երեխայի ակտիվությունը:

Փոխներգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

- երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,
- համագործակցային կարողությունների դրսևորումը,
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը,
- հաղորդակցական ունակությունների ձևավորումը,
- տրամաբանական մտածողության զարգացումը,
- ճանաչողական հետաքրքրությունների բացահայտումը,
- վերլուծական կարողությունների ձևավորումը:

Ուսուցման փոխներգործուն մեթոդներն ունեն կիրառման որոշակի կանոններ: Աշխատանքը սկսելուց առաջ անհրաժեշտ է նախօրոք պատրաստել խմբասենյակը, նախօրոք պատրաստել անհրաժեշտ պարագաները, հարկ է խրախուսել երեխաներին և պարապմունքին ներգրավել բոլոր երեխաներին:

Փոխգործուն մեթոդներից են.

1. **Մտքերի տարափը**, որի նպատակն է մտքերի կուտակման, բացահայտման, արտահայտվելու հնարավորության ստեղծումը:
2. **Զրույցը**, որը նպաստում է երեխաների մտքերի ինքնուրույն արտահայտմանը: Նպատակահարմար են հետևյալ թեմաները «Ես և իմ ընտանիքը», «Իմ ընկերը» և այլն:
3. **Հարցերը կամ հարցադրումները**, որոնք խթանում են երեխաների մտածողությունը: Օրինակ՝

   -Եղանակային ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում ձմռանը, գարնանը, ամռանը, աշնանը:
   -Քա՞նի տեսակ են լինում փոխադրամիջոցները:
   -Ի՞նչ է պատկերված նկարում և այլն:

4. **Դերային խաղը**, որը հնարավորություն է տալիս մասնակիցներին բացահայտել իրենց ընդունակությունները: Անհրաժեշտ է ընտրել հետաքրքրաշարժ թեմատիկա՝ <<Բժիշկ-բժիշկ>>, <<Տուն-տունիկ>> և այլն:

5. **Իրավիճակի վերլուծությունը**, որն իրականացվում է դաստիարակի և երեխաների համագործակցությամբ: Թեման ընտրում է դաստիարակը: Օրինակ՝ «Ինչպե՞ս պահպանել ճանապարհային եթրևեկության կանոնները», «Ինչպե՞ս օգնել հայրիկին» և այլն:

1 .2 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են անմիջականությունը, հետաքրքրասիրությունը, երևակայությունը, երեխաները ձեռք են բերում փոքր հասակում: Այս հատկանիշները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում: Եվ որպեսզի հասնենք այս նպատակին, հարկ է ուսումնառությունը կազմակերպել թեմատիկ պարապմունքների միջոցով: <<Թեմատիկ ուսուցումը նպաստում է երեխայի համակողմանի զարգացմանը: Այսպիսի ուսուցման արդյունքում ապահովվում է ծրագրի միջառարկայական կապը, խրախուսվում է երեխայի ինքնուրույնությունը, նպաստում է երեխայի անհատականացմանը>>:[4]

Թեմատիկ պարապմունքները կարևորում են սանի ինքնուրույն մտածողությունը, հնարամտությունը, անձնական կարգապահությունը: Այսպիսի ուսուցումը ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և էսթետիկական ոլորտների համակողմանի զարգացումը:

Թեմատիկ ուսուցումից շահում են բոլորը. ծնողները ներգրավվում են խմբում կատարվող աշխատանքների մեջ, դաստիարակները հետաքրքրված են դասերի նոր բովանդակությամբ, իսկ երեխաները յուրովի մտածողներ են և կարողանում են իրենց գիտելիքները դրսևորել: Եվ եթե դաստիարակը հմտորեն պլանավորում է ուսուցումը, ապա երեխաները կրողն են դառնում այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են՝ միմյանց նկատմամբ հոգատարությունը, համագործակցությունը, կատարած աշխատանքներով ուրախանալը:

[4] Տե՛ս <<Նախաշավիղ>>, 2013:

ԲԱԺԻՆ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ինտեգրված ուսուցման և ուսուցման փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդի արդյունավետությունը կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Հետազոտության խնդիրներն են ուսուցման ինտեգրված և ինտերակտիվ մեթդների բացահայտումն ու արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ:

Հետազոտական աշխատանքը կատարել ենք միջին և ավագ տարիքային խմբերում: Ստորև ներկայացնում ենք ինտերակտիվ և ինտեգրված պարապմունքների պլան-կոնսպեկտներ:

2.1 <<ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ>> ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ_ԿՈՆՍՊԵԿՏ

Թեմա՝ «Ընտանիք»

Տարիքային խումբ՝ միջին

Տևողությունը՝ 20-25 րոպե

Նպատակ՝ Սովորեցնել ներկայացնել ընտանիքի անդամներին, պատկերել նրանց թղթի վրա և խոսքով նկարագրել նրանց հանդեպ տածած իրենց սերը: Բառապաշարը հարստացնել <<ընտանիք, սեր, եղբայր, քույր, միասին>> բառերով:

Անհրաժեշտ պարագաներ՝ ընտանեկան լուսանկարներ, սպիտակ թղթեր, գունավոր մատիտներ:

Ընթացքը՝ *Խթանման փուլ*

-Երեխանե՛ր, առավոտյան, երբ լույսը բացվում է, ի՞նչ ենք անում:(Լվացվում, հագնվում, գալիս ենք մանկապարտեզ):

Երեխաներին ցույց տալ ընտանիք պատկերող նկարը: Պատմել, որ նկարում պատկերված է ընտանիք, ով ճաշում է: Ընտանիքի անդամներն են՝ հայրիկը, մայրիկը, տատիկը, պապիկը, ինչպես նաև փոքրիկ երեխաները:

Իմաստի ընկալման փուլ

Երեխաներին առաջարկել դիտել իրենց ընտանեկան լուսանկարները, ասել, թե ովքեր են նկարում, տալ նրանց անունները, պատմել՝ ինչ առիթով են նկարվել:

-Ովքե՞ր են լուսանկարում:

-Ո՞ւմ հետ եք ապրում:

_Ի՞նչ է հայրիկի (մայրիկի, տատիկի, քույրիկի, եղբոր) անունը:

-Ի՞նչ առիթով եք նկարվել:

Ըստ լուսանկարի բովանդակության հարցերն ավարտելուց հետո ընթերցել Հ. Հայրապետյանի <<Այս բոլորին>> բանաստեղծության կրճատված տարբերակը:

Այս բոլորին

Սա մայրիկս է, սա հայրիկս է,
Սա տատիկս է, սա պապիկս է,
Սա եղբայրս է, սա էլ սիրուն,
Ժիր քույրիկս է:
Սա մեր տունն է, սա մեր շունն է,
Սա էլ մեր շան հողե բույնն է:
Հիմա վերցնենք վրձին ու ներկ,
Այս բոլորին մենք նկարենք:

Ֆիզկուլտդադար՝ արտասանել «Այս մատիկը» բանաստեղծությունը:

Այս մատիկը պապիկս է,
Այս մատիկը տատիկս է,
Այս մատիկը հայրիկս է,
Այս մատիկը մայրիկս է,
Սա էլ փոքրիկ Արամիկն է:

Հետո երեխաները նստում են սեղանների շուրջը: Յուրաքանչյուրին տրվում են թուղթ և մատիտներ: Երեխաները նկարում են իրենց ընտանիքի անդամներից որևէ մեկին կամ ամբողջ ընտանիքին: Նկարելուց հետո քննարկել նկարածը:
-Ո՞ւմ ես նկարել:
_Ինչո՞ւ ես հայրիկին, մայրիկին նկարել:
_Ի՞նչ է հայրիկի, մայրիկի անունը:
-Ընտանիքի անդամներից ո՞ւմ ես ամենաշատը սիրում:
-Քա՞նի տարեկան է քույրիկդ:

Կշռադատման փուլ

Ամփոփելով թեման, նշել, որ անհրաժեշտ է սիրել, հարգել ընտանիքի բոլոր անդամներին: Տատիկը, պապիկը, մայրիկը, հայրիկը մեր սիրելի մարդիկ են: Մենք պետք է հարգենք ու սիրենք նրանց:Երբեք չպետք է բարկացնենք նրանց. նրանք մեզ շատ-շատ են սիրում, ուստի մենք էլ պետք է սիրենք ու հարգենք նրանց:
Արդյունավետությունը: Արդյունքում ստացվեց շատ հետաքրքիր, ուսուցողական պարապմունք: Երեխաները նկարագրեցին իրենց ընտանիքի անդամներին: Երեխաների մեջ դրական վերաբերմունք և սեր արթնացավ ընտանիքի անդամների հանդեպ: Հարստացավ բառապաշարը, և որ ամենակարևորն է. երեխաները մեծ ոգևորությամբ պատմեցին իրենց նկարների բովանդակությունը: Փաստորեն, ինտեգրելով խոսքի զարգացում և նկարչություն պարապմունքները, հասանք մեր պարապմունքի նպատակին:



2.2 <<ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ՇՐՋԱՊԱՏԻՆ>> ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ ԿՈՆՍՊԵԿՏ.

Թեմա՝ <<Ճանապարհային երթևեկության կանոններ>>:
Տարիքային խումբը՝ ավագ:
Տևողությունը՝ 25-30 րոպե:

Նպատակ՝ Ամրապնդել ճանապարհային երթևեկության կանոնների մասին երեխաների պատկերացումները: Բացատրել <<ուղևոր, հետիոտն, լուսակիր, ճանապարհային նշան, անցումային մաս, վերգետնյա, ստորգետնյա>> բառերի իմաստը: Զարգացնել երեխաների ուշադրությունը, հիշողությունը: Ամրակայել հարցերին ամբողջական նախադասություններով պատասխանելու կարողությունը: Ձևավորել փողոցում գտնվելիս կիրթ վարքագիծ դրսևորելու ունակություն: Ամրապնդել <<Երթևեկության կանոններ>> երգի բառերը:
Անհրաժեշտ պարագաներ: Զբոսանքից հետո երեխաների հետ անցկացնել զրույց փողոցի մասին: Ճանապարհային նշանները պատկերող ուսումնական քարտեր, թեմատիկ նկարներ, տիկնիկ լուսակիր:

Ընթացքը՝ *Խթանման փուլ*

_Երեխանե'ր, մենք ո՞ր քաղաքում ենք ապրում:
-Ովքե՞ր գիտեն իրենց բնակության հասցեն:
-Ո՞վ կասի, քանի տեսակ են լինում փոխադրամիջոցները:
_Նշե'ք օդային (ջրային, ցամաքային)տրանսպորտային միջոց:
-Այն մարդիկ, ովքեր տեղափոխվում են որևէ փոխադրամիջոցով, ինչպե՞ս են կոչվում (ուղևոր), իսկ այն մարդիկ, ովքեր ոտքով են քայլում (հետիոտն):

Իմաստի ընկալման փուլ
-Երեխանե'ր, այժմ եկեք ներկայացնենք մի փոքրիկ դրվագ՝ <<Կյանքը փողոցում>>: (Վարորդները վարում են ավտոմոբիլները, հետիոտները քայլում են, բայց վերջիններս խախտում են ճանապարհային երթևեկության կանոնները, մոտենում են ոստիկանը և բժիշկը):
Ոստիկան- Հետիոտնը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնները և փողոցն անցել է ոչ թույլատրելի հատվածով:
Դաստիարակ- Երեխանե'ր, ի՞նչ պատահեց հետիոտներին: (Փողոցն անցան ոչ թույլատրելի հատվածով): Գիտե՞ք, փողոցի մի կողմից մյուսն անցնելը այդքան էլ

հեշտ չէ. անհրաժեշտ է իմանալ ճանապարհն անցնելու կանոնները: (Դուռը թակում են): Տեսնես ո՞վ է հյուր եկել: Եկե'ք բացենք դուռը: Օ՜ տիկնիկ լուսակիրն է մեզ հյուրընկալվել: Եկեք մի գեղեցիկ հանելուկ արտասանենք նրա համար.

-Երեք գույնի աչքեր ունի, բանալին է խաչմերուկի:

Լուսակիրը կարգավորում է փողոցի երթևեկությունը: Հերթով բացուխուփ է անում իր երեք աչքը և ուղղություն է ցույց տալիս վարորդներին և հետիոտներին: Վերևի կարմիրը արգելում է մեքենաների շարժը, դեղինը նախազգուշացնում է, կանաչը ցույց է տալիս, որ ճանապարհը բաց է: Բացի լուսակրի երեք գույներից, կան նաև այլ նշաններ: Զեբրի զոլակներին նման սև և սպիտակ շերտերը օգնում են հետիոտներին անցնել փողոցը: Այս սև և սպիտակ շերտերը նկարված են ճանապարհին՝ անցորդների համար: Կա մի նշան, որը թույլ է տալիս հետիոտնին անցնել փողոցը (ցույց տալ նշանը): Այս նշանը ցույց է տալիս, որ հենց այս կողմով կարելի է անցնել փողոցը, իսկ վարորդը պետք է ուշադիր լինի:

Ֆիզկուլտդադար՝ <<Օդում, ջրում, ցամաքում>>

Հետիոտնի և մեքենաների շարժումը համաձայնեցվում են լուսակրի ազդանշանի, կամ ավտոտեսչության աշխատակցի միջոցով:

-Եկե'ք հիշենք՝ ինչպե՞ս էր հոտիոտն անցնում փողոցը: (Հիշել կանոնները):

Կան հետիոտներ, ովքեր չեն հասցնում փողոցն անցնել, այս դեպքում հետիոտնը պետք է կանգնի փողոցի կենտրոնական մասում՝ <<անվտանգ կղզում>> և սպասի այնքան, մինչև երևա լուսակրի ազդանշանը:

-Այժմ եկեք ունկնդրենք մի բանաստեղծություն՝ ամենալավ անցման մասին.

Ամենալավ անցումը

Ես անցնում եմ լայն պողոտան,
Չեմ շտապում ամենևին,
Չեմ վախենում ավտոբուսից,
Ուրիշ այլ տրանսպորտից:
Անցումն այստեղ լայն է, երկար,
Ավտոները թող սլանան,
Ինչի՞ց պետք է ես վախենամ:
Ինչի՞ց պիտի ես վախենամ,
Մի'տագնապեք դուք ինձ համար,
Ես լավ գիտեմ օրենք ու կարգ,
Ամենալավ անցո'ւմն է սա՝
Ստորգե'տնյա է և անվտանգ:

-Ո՞րն է անվտանգ անցումն՝ ըստ բանաստեղծության:
ԽԱՂ՝ «Անցի'ր փողոցը»:

Կշռադատման փուլ

-Ի՞նչ նշանակություն ունեն լուսակրի երեք գույները:
-Որտեղո՞վ կարող են փողոցն անցնել հետիոտները:
-Եթե հետիոտները չեն հասցնում փողոցն անցնել, ի՞նչ պետք է անեն:
-Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կկատարվի, եթե լուսակիրը հոգնի և աշխատել չցանկանա:
-Այժմ կերգենք «Երթևեկության կանոնները»:

Պարապմունքի ընթացում իրավիճակի վերլուծության միջոցով երեխաները հասկացան հետիոտնի սխալ արարքը և հանգեցին այն եզրակացության, որ փողոցն անցելու համար անհրաժեշտ է իմանալ ճանապարհային երթևեկության կանոնները: Խաղի, հարցադրումների միջոցով ամրապնդվեցին երեխաների գիտելիքները: Բառապաշարը հարստացավ նոր բառերով՝ ստորգետնյա, վերգետնյա անցում, հետիոտն, ուղևոր, լուսակիր, ճանապարհային նշան: Զարգացավ ուշադրությունն ու հիշողությունը, ինչպես նաև ամրապնդեցին <<Երթևեկության կանոններ>> երգը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով համալիր և ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում թեման, հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

- Յուրաքանչյուր երեխա ունի որակյալ կրթություն ստանալու իրավունք,
- Դաստիարակի առաքելությունն է դաստիարակել համակողմանի և ներդաշնակ զարգացած անձ,
- Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ակտիվ ուսուցման մեթոդները՝ ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդները,
- Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը, գերակայությունը, մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ,
- Ինտեգրված պարապմունքների արդյունավետությունն այն է, որ բոլոր երեխաները դառնում են գործուն, յուրաքանչյուրը զբաղվում է իր առանձնահատկություններին համապատասխան, իր համար ցանկալի աշխատանքով: Այստեղ տարբերվում է մի երեխայի գերակայությունը մյուսների նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք>>:

2. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան՝ <<Ուսումնական ձեռնարկ >>, Երևան 2010:

3. Մանկապարտեզի ավագ խմբի /5-6 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր 2008թ

4. Ս. Մարության, Ա. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>>, բուհական դասագիրք, Երևան 2008թ:

5. <<Նախաշավիղ>>, 2008- 2009, 2013: